ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՆԿԱՏԱՆ ՇԵՆՔ

Սեպտեմբերի 2-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Սուրբ Գայանե վանքում գտնվող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մանկապան շենքի բացման արարողությունը: Շենքը հիմնովին վերանորոգվել է լոնդոնաբնակ Քյուրքչյան ընտանիքի բարերարությամբ՝ ի հիշատակ հոգելույս տիար Ջորջ Քյուրքչյանի եւ նրա դուստր Մարինա Քյուրքչյանի:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից իրականացվող ընկերային ծրագրերի շարքում մանկապան բացումը հերթական կարեւոր ձեռնարկն է, որով Եկեղեցին որբախնամ գործունեություն կիրականացնի: Մանկապունը նախատեսված է կարիքավոր ընտանիքների եւ ծնողազուրկ 42 մանուկների ու պատանիների համար, որոնք կուսանեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօրնեկյան» հանրակրթական դպրոցում, կհաճախեն Էջմիածնի Հայորդյաց տուն: Քյուրքչյան ընտանիքը Մայր Աթոռի մանկապան շենքի հիմնանորոգությունից բացի սպանձնել է նաեւ մանկապան հետագա գործունեության հովանավորությունը:

Ներկայությամբ Ջոն Քյուրքչյանի եւ նրա ընտանիքի, ինչպես նաեւ հոգելույս Ջորջ Քյուրքչյանի ընտանիքի անդամների, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանների հետ աղոթքով կատարեց շենքի բացման արարողությունը, որից հետո Նորին Սրբությունը Հայրապետական իր խոսքն ուղղեց ներկաներին. «Աստծո ողորմությամբ հաջողեցինք իրականացնել վերջին ցանկությունը Հայոց Եկեղեցու մեծ բարերարի՝ տիար Ջորջ Քյուրքչյանի: Նա իր մահվան մահճում ցանկություն հայտնեց, որ Ս. Գայանե վանքին կից, ուր ամփոփված են իր ծնողաց աճյունները, կառուցվի մանկապան՝ խնամատարելու մեր ազգի կարիքավոր զավակներին: Այսօր իրականություն է դարձել նրա փափագը, եւ մենք, իր եւ եղբոր ընտանիքների ներկայությամբ, կատարում ենք մանկապան բացման արարողությունը»:

Վեհափառ Հայրապետը, հրավիրելով ներկաներին աղոթք հնչեցնելու բարերարի հոգու համար, նաեւ նշեց, որ այսուհետեւ սույն հաստատությունից ներս եւս աղոթք պիտի բարձրանա առ Աստված Քյուրքչյան ընտանիքի համար, որը հայտնի է իր բարեգործ եկեղեցանվեր ոգով եւ շուրջ կես դար նվիրյալ կերպով, իր կարողություններով ու միջոցներով մշտապես զորավիգ է եղել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ջոն Քյուրքչյանը եւ Լոռա Քյուրքչյանը կտրեցին շենքի մուտքի ժապավենը, ապա բարերարները եւ ներկաները ծանոթացան շենքի պայմաններին:

Բացման արարողության ավարտին Սուրբ Գայանե վանքի գերեզմանատանը Մայր Աթոռի բարերարներ Սարգիս եւ Ասպղիկ Քյուրքչյանների շիրիմների կողքին ամփոփվեց նրանց զավակի՝ Ջորջ Քյուրքչյանի աճյունասափորը: Կատարվեց հոգեհանգստյան կարգ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՏԱՐՎԵՑ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 2010-2011 ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) 2010-2011 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, ճեմարանի դասախոսական կազմի եւ սաների:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչության անունից բացման խոսքով հանդես եկավ փոխտեսուչ Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը: Շնորհավորելով սաներին նոր ուսումնական տարվա առիթով՝ հոգեշնորհ Հայր Սուրբն ասաց, որ տեսչությունը հավատացած է՝ այս տարին լինելու է ձեռքբերումների եւ հաջողությունների տարի: Փոխտեսուչը նախ երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ճեմարանի հանդեպ նրա բարեխնամ հոգածության եւ մշտական ուշադրության համար, ապա շնորհակալություն հայտնեց տեսչության անդամներին եւ դասախոսական կազմին՝ ճեմարանական կյանքին կենսունակություն հաղորդելու եւ սաների հետ տարվող անտրտունջ աշխատանքի համար:

Խոսքն ուղղելով ճեմարանականներին՝ Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը նշեց. «Թող ձեր մուտքը ճեմարան օրհնությամբ լինի աստվածային շնորհի եւ նախախնամության լույսի ներգործությամբ, եւ թող Աստծո պահապան աջը զորավիգ լինի ձեզ: Աղոթքս է առ Աստված, որպեսզի Տերը արդյունավորի մեր ընթացքը՝ իմաստության հարատեւ շնորհներ պարգեւելով մեզ՝ բոլորիս»:

Հոգեւոր եւ ազգային հոգեզմայլ երգերի կատարումից հետո ուսանողության անունից երախտիքի խոսք ասաց Արմեն ուրարակիր Սահակյանը:

Վերջում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անունից օրհնության խոսք ասաց Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանը: «Դո՛ք, սիրելի ուսանողներ, Հայ Եկեղեցու զինվորներն եք, եւ այս զինվորագրությունը շատ ավելի մեծ պատիվ է բերում մարդուն, քան որեւէ այլ զինվորագրություն: Այսօր հրճվանքով եմ նայում ձեզ, հրճվանքից ավելի նաեւ հույսով եմ նայում ձեզ: Ստեղծեցե՛ք ձեզ համար արժեքներ այնպես, ինչպես Քրիստոս է պատվիրում, արժեքներ, որոնք մնայուն են ձեր անձի համար, մեր Եկեղեցու եւ մեր ժողովրդի համար: Ձեր կյանքի հաջողությունը, ձեր կյանքի երջանկությունը տեսեք մեր Եկեղեցու առաջադիմության մեջ. նրանով ապրեք, նրանով հուզվեք եւ նրանով երջանկացեք: Թող Տերը օրհնի ձեզ, որպեսզի այս հարկից ներս պատրաստվեն զինվորներ այնպես, ինչպես

կուզեին Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Ղեւոնդ Երեցը, Խրիմյան Հայրիկ Հայրապետը...», - նշեց Սրբազան Հայրը:

Այս տարի Գեւորգյան հոգեւոր ճեմարան է ընդունվել 14 սան: Ուսանողության ընդհանուր թիվը կազմում է 128 հոգի: Ճեմարանում դասավանդում են 22 եկեղեցական եւ 28 աշխարհական դասախոսներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի 2010-2011 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը տեղի ունեցավ սեպտեմբեր 12-ին, Սեւանի դպրեվանքում: Այս տարի Վազգենյան հոգեւոր դպրանոցի ուսանողության շարքերը համալրել են 28 երիտասարդներ: Ուսանողության ընդհանուր թիվը կազմում է 66 հոգի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ԲԱՑՈՒՄ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

Սեպտեմբերի 23-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Հայ Եկեղեցու բարեբարեր տեր եւ տիկին Սարգիս եւ Հռութ Բեդեւյանների, տեղի ունեցավ Վանաձոր քաղաքի «Սուրբ Գրիգոր Նարեկացի» Հայորդյաց տան բացման արարողությունը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին՝ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը, միաբաններ Մայր Աթոռից:

Վեհափառ Հայրապետին Վանաձոր քաղաքի մուտքին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը եւ Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը: Այնտեղից Հայրապետական շքախումբը եւ մարզային իշխանությունների ներկայացուցիչները մեկնեցին Բեդեւյան ընտանիքի բարեբարությամբ կառուցված Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցի, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն Բեդեւյան ընտանիքի ննջեցելոց հոգիների հանգստության համար:

Եկեղեցուց Նորին Սրբությունը մեկնեց «Սուրբ Գրիգոր Նարեկացի» Հայորդյաց տուն: Վանաձորի Հայորդյաց տան հիմնարկեքը կատարվել էր 2007 թ. օգոստոսի 30-ին: Բեդեւյան ամուսինների ազնիվ բարերարությամբ կառուցված կրթօջախի ճարտարապետն է Մարիամ Մովսիսյանը, շինարարական աշխատանքներն իրականացրել է «Ա. Հակոբյան» ՍՊԸ-ն:

Հայորդյաց տան մուտքի մոտ Ամենայն Հայոց Հայրապետին, բարերարներին եւ հյուրերին ողջունեցին Հայորդյաց տան սաներն ու բազմաթիվ վանաձորցիներ: Փողային նվագախմբի երաժշտության եւ ծափահարությունների ներքո ազգային տարազներով մանուկները հյուրերին մատուցեցին ավանդական աղն ու հացը: Այնուհետեւ Նորին Սրբությունն ու տեր եւ տիկին Բեդեւյանները հատեցին մուտքի կարմիր ժապավենը: Վեհափառ Հայրա-

պետն ու հյուրերը ծանոթացան շենքի պայմաններին, դիտեցին բարեգործական ճաշարանի մասնաբաժինը եւ մանկական խաղադաշտը:

Շրջայցից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական դասի հետ կատարեց նորաբաց Հայորդյաց տան օրհնության արարողությունը: Աղոթքին հաջորդեցին ողջույնի խոսքերը: Մանկավարժների եւ սաների անունից Նորին Սրբությանն ու բարերարներին երախտագիտության խոսքով դիմեց Հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը: Այնուհետեւ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, ողջունելով Վեհափառ Հայրապետին եւ բարերարներին, անդրադարձավ մանուկների կրթության ու դաստիարակության գործում նման կառույցի կարեւորությանը: Զեռնարկի կարեւորությանն անդրադարձան նաեւ Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը եւ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը՝ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին ու բարերարներին նմանօրինակ ազգօգուտ եւ հայրենանպաստ ծրագրերի իրականացման համար:

Հիշարժան օրվա առիթով ներկաներին իրենց ապրումներին հաղորդ դարձրեցին բարերարներ Սարգիս եւ Հռութ Բեդեյանները: Տիկին Բեդեյանն անդրադարձավ Վանաձորում Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու եւ Հայորդյաց տան կառուցման գաղափարի մտահղացմանը՝ ուրախություն հայտնելով, որ այսօր այլեւս դրանք իրականության են կոչված: Իր խոսքում Սարգիս Բեդեյանը երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Հայորդյաց տների կարեւոր ծրագիրը տարիներ առաջ նախաձեռնելու եւ կյանքի կոչելու համար, ապա անդրադարձավ մանուկների եւ երիտասարդների նկատմամբ հոգացության անհրաժեշտությանը: Դիմելով նորաբաց հաստատության սաներին՝ տիար Բեդեյանը հորդորեց. «Ուրախացե՛ք, լա՛վ պահեցեք եւ զարդի պես վայելեցե՛ք այս տունը»:

Վերջում օրհնության եւ գնահատանքի իր խոսքը ներկաներին ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Ամենքս հոգու բերկրանքի մեջ ենք, որովհետեւ իր դռներն է բացել մի կառույց, ուր մեր զավակները պիտի մուտք գործեն, կրթվեն ու դաստիարակվեն: Եւ ինչպե՞ս չուրախանանք. չէ՞ որ մենք ապրում ենք մեր զավակների համար, չէ՞ որ մեր զավակները դժվարությունների մեջ մեզ ուժ ու ոգի են տալիս, որպեսզի մենք հարատեւենք, հաղթահարենք մեր կյանքի ճանապարհին ծառացող յուրաքանչյուր խոչընդոտ, մեզ հույս եւ հավատ են ներշնչում դեպի մեր վաղվա օրը», - նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում: Ապա դիմելով ծնողներին եւ մանկավարժներին Նորին Սրբությունը պատգամեց. «Տեսե՛ք ձեր զավակների մեջ Աստծո պատկերը: Քրիստոսի պատգամն ունեցեք՝ զավակներին հոգ տանելու, նրանց կյանքի ճանապարհը հարթելու, որպեսզի իբրեւ աստվածասեր զավակներ կերտեն մեր կյանքի երջանկությունը, Աստծո օրհնությունն իջեցնեն մեր կյանքից ներս»:

Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքն ու օրհնությունը բերեց տեր եւ տիկին Սարգիս եւ Հռութ Բեդեյաններին, որ իրենց արդար վաստակից մասնաբաժին են հանում մեր ժողովրդի զավակներին՝ Վանաձորի մանուկներին, մաղթեց նրանց Աստծո հանապազ զորակցություն եւ կենաց արեւշատություն:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց մարզպետին եւ քաղաքա-

պետին՝ ցուցաբերած աջակցության, ինչպես նաև ճարտարապետին ու շինարարներին՝ նախանձախնդիր եւ ջանադիր աշխատանքի համար:

Հայրապետական պատգամին հաջորդեց Վանաձորի «Ս. Գրիգոր Նարեկացի» հայոց դպրոց տան եւ Երեւանի Նորքի հայոց դպրոց տան սաների համերգային ծրագիրը, որի ավարտին մանուկները բարերարներին նվիրեցին իրենց ձեռագործ աշխատանքները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԵԿ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Նիդերլանդների Բողոքական եկեղեցիների հրավերով սեպտեմբերի 21-24-ը Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի Կենտրոնական կոմիտեն իր տարեկան հանդիպումը գումարեց Հոլանդիայի Ուտրեխտ քաղաքում:

Ժողովի ընթացքում լսվեցին ԵԵԿ գործող գլխավոր քարտուղարի, կառույցի «Եկեղեցիները երկխոսության մեջ», «Եկեղեցի եւ Հասարակություն» եւ Միգրացիայի հարցերով հանձնախմբերի զեկույցները տարեկան գործունեության մասին: Կենտրոնական կոմիտեն քննեց եւ հաստատեց Եկեղեցիների Եւրոպական Կոնֆերանսի 2011 թ. աշխատանքային հրամայականները, լսեց ԵԵԿ կառույցը վերակազմավորող հանձնախմբի զեկույցը եւ հանձնարարականներ տվեց հետագա աշխատանքների համար:

Կենտրոնական Կոմիտեն լսեց նաև Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի եւ Եւրոպայում Կաթոլիկ Եկեղեցու Եպիսկոպոսական Խորհրդի միջև համագործակցության հատուկ հանձնախմբի զեկույցը:

Կոմիտեի անդամները մտքեր փոխանակեցին «Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի առաքելությունն այսօրվա աշխարհում» թեմայի շուրջ՝ հաստատելով, որ Կոնֆերանսը մի կառույց է, որտեղ եկեղեցիները իրենց ներկայացուցիչների միջոցով հանդիպում են միմյանց ավելի լավ ճանաչելու համար, ինչի միջոցով լսելի է դառնում ավելի փոքր եկեղեցիների, խոցելի խմբերի ձայնը արդարության եւ խաղաղության հարցերի շուրջ: Կարեւորվեց աշխարհում ԵԵԿ կատարած ջատագովական աշխատանքը, ինչպես նաև կազմակերպած ասպվածաբանական քննարկումները:

Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսը ընտրեց եւ հաստատեց 2013 թ. համաժողովը նախապատրաստող հանձնախմբի անդամներին: Սեպտեմբեր 23-ի երեկոյան Կենտրոնական Կոմիտեի անդամները հանդիպեցին Հոլանդիայի եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնց մեջ էր նաև Հոլանդիայի հոգեւոր հովիվ Տ. Տաթեւ վարդապետ Հակոբյանը, որը ներկաներին տեղեկություններ հայտնեց Հոլանդիայի հայ համայնքի եւ գործող հինգ ծիսերի հոգեւոր կյանքի ու էկումենիկ կապերի մասին:

Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի Կենտրոնական Կոմիտեի հանդիպմանը

մասնակցում է այդ կառույցում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, որ նաեւ Կոնֆերանսի նախագահ Ֆրանսիայի Էմանուել միտրոպոլիտի հետ ընտրվեց նոր գլխավոր քարտուղարի ընտրության հանձնախմբում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Է ԸՆՏՐՎԵԼ Տ. ՏԱԹԵԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆԸ

Սեպտեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական օրհնությամբ հաստատել է սեպտեմբերի 21-ին Ռումինիայի Հայոց թեմի թեմական պատգամավորական ժողովի կողմից Ռումինիայի թեմի առաջնորդ ընտրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Հոլանդիայի հայոց հոգեւոր հովիվ Տ. Տաթեւ վարդապետ Հակոբյանի ընտրությունը:

Տ. Տաթեւ վարդապետ Հակոբյանը ծնվել 1966 թ. հուլիս 7-ին Իրաքի Մուսուլ քաղաքում (ավազանի անունը՝ Հրաչ):

1972-1979 թթ. սովորել է Բաղդադի միջնակարգ դպրոցում:

1979-1986 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում: 1986 թ. փետրվարի 14-ին Ս. Էջմիածնում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի:

1986-1987 թթ. գործուղվել է Իրաքի հայոց թեմ՝ որպես սարկավագ:

1988 թ. մարտի 10-ին Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառը «Եւսեբիոս Կեսարացին հայ մատենագրության մեջ» թեմայով եւ արժանացել գերազանց գնահատականի:

1988-1990 թթ. ԵՀԽ հովանավորությամբ սովորել է Ժնեւի համալսարանում: Միեւնույն ժամանակ ծառայել է Ժնեւի Ս. Հակոբ եկեղեցում որպես քարտուղար եւ սարկավագ, դասավանդել է կիրակնօրյա դպրոցում: Հիմնել է Շվեցարահայ Երտասարդաց Միությունը:

1990-1992 թթ. ծառայել է Հոլանդիայի Ս. Հոգի եկեղեցում որպես քարտուղար, սարկավագ, խորհրդատու եկեղեցական վարչության, հիմնել է կիրակնօրյա վարժարան:

1993 թ. փետրվարի 18-ին ձեռամբ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա Բաղդադի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում, սպասավորել է իբրեւ հոգեւոր հովիվ, դասավանդել է քրիստոնեական կրոն Բաղդադի «Սրբոց Թարգմանչաց» Հայ Եկեղեցասիրաց Կազմակերպությունում եւ կիրակնօրյա վարժարաններում:

1993-1996 թթ. հոդվածներով հանդես է եկել «Լրարեր» եւ «Ձայն» իրաքահայ ամսագրերում:

1996-ի հունիս-հոկտեմբեր ամիսներին նշանակվել է Պոլսի Հայոց պատրիարքարանի «Լրարեր» շաբաթաթերթի խմբագրության անդամ եւ հանդես է եկել մի շարք հոդվածներով:

1996-1997 թթ. հրավիրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ծառայել է Հայ Եկեղեցու ՔԴՔԿ-ում, դասախոսել է Էջմիածնի կիրակնօրյա վարժարաններում, Կրոնի ուսուցիչների վերապատրաստման լսարաններում, քարոզներով հանդես է եկել Հայաստանի պետական հեռուստատեսութեամբ «Սիրեցէք զմիմեանս» եւ «Խորան Լուսոյ» հաղորդաշարերով, ինչպես նաեւ ձայնասփյուռով:

1997 թ. սեպտեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Հայրապետի հովանավորությամբ նշանակվել է Լուար նահանգի Սենթ-Էթիենի ու շրջանի հայոց հոգեւոր հովիվ:

1997-1998 թթ. ուսանել է ֆրանսերեն լեզու եւ գրականություն Սենթ-Էթիենի Ժան Մոնե համալսարանում :

1997-2004 թթ. Սենթ-Էթիենի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հիմնել է «Թարգմանչաց» երգչախումբ, կիրակնօրյա վարժարան, եկեղեցասեր Տիկնանց հանձնախումբ, հայոց լեզվի դասարաններ երրասարդության համար եւ «Հայ Լուար մաքազին» եռամսյա թերթը:

2000-2004 թթ. հանդես է եկել Սենթ-Էթիենի Կաթոլիկ Եկեղեցու RCF ռադիոկայանի Հայ Եկեղեցու մասին հաղորդաշարերով:

1999 թ. պաշտպանել է իր վարդապետական թեզը «Մատաղը հայ աստուածաբանության մեջ» թեմայով Լիոնի համալսարանի հայագիտական բաժնում եւ սեպտ. 12-ին ստացել է վարդապետական աստիճան, ձեռամբ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի Լիոնի Ս. Հակոբ եկեղեցում:

2004 թ. ապրիլին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Հոլանդիայի Հայոց հոգեւոր հովիվ:

2004-2010 թթ. հիմնել է Հոլանդիայում հինգ եկեղեցական ծուխեր՝ Արնհեմ, Տուրրեխդ, Ասսըն, Այնթհովեն եւ Մաստրիխդ քաղաքներում, ինչպես նաեւ՝ Ալմելոյի «Գեղարդ» երգչախումբը, կիրակնօրյա վարժարանը, Սուրբ Գրոց Լսարանը եւ Հայ Եկեղեցասիրաց Կազմակերպությունը (VAJA):

2007 թ. հոկտեմբեր 14-ին կատարել է Ամստերդամի Հայ Եկեղեցասիրաց Կազմակերպության (AYO) բացումը:

2008 թ. Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ վերանորոգել է հայոց հինավուրց Սուրբ Հոգի եկեղեցին:

2010 թ. Ամստերդամի վարչության նախաձեռնությամբ կանգնեցրել է Ամստերդամի Տիմբն գերեզմանոցի մեջ խաչքար-հուշարձան՝ նվիրված Հայոց Նահատակների հիշատակին: Հրատարակել է Հոլանդիայի Հայոց Հոգեւոր հովվության պատկերազարդ եկեղեցական օրացույցը եւ կազմակերպել է Սուրբ Պատարագի թարգմանությունը հոլանդերենի:

Հրատարակել է բազմաթիվ գիտական հոդվածներ, սփյուռքահայ մամուլում մի շարք հրապարակումների հեղինակ է:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ